

ԻՐԱՅԻՐ ՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եղայն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԿՈՒՆՔՆԵՐ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻՈ)
Редакция на ВѢСТНИКЪ
„Правункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարեալ դատաւար-
ները միայն կը հրատարակուին անդո-
ղովին կամ մասաւր:
Իրանուցեան տղք 20 ամսեայ երե-
փն աւելի անգամներու համար 20 0/0
զեղջ կը լինի:

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ա.

Մեր նախնիքաց թիւի նախա-
յօդուածով ցոյց տուինք թէ իրե-
րու ներկայ վիճակին մէջ, ա՛յ
ներելի չէ մեզ շարունակել կու-
սակցական պայքարները, որոնք
ժողովուրդի հոգիին մէջ լքումի եւ
վճատութեան սերմեր կը նետեն:
Ոչ միայն ասոր համար, ուրիշ
պատճառով մըն ալ պէտք է որ ա՛յ
գաղութի պայքարները, եթէ պայ-
քարը պայքարի համար կը մղենք,
ատոր համար ըսելիք չունինք.
մղենք յաւիտեան: Իսկ եթէ վի-
ճարանութիւններն ու յարձակում-
ներն նպատակ ունին հանրութեան
օգտին ծառայել՝ յեղափոխու-
թեան շուրջը դարձող կարգ մը
մը խնդիրներ լուսարանելով, ճշ-
մարտութիւնը երեւան հանելով եւ
ժողովուրդը զգուշացնելով խարէ-
ութեանց զոհ երթալէ, մեզ կերե-
ւայ որ ժամանակն եկած է վե-
ճերը փափուած համարելու այն
հին խնդիրներու վրայ, որոնց
մասին ըսուելիք նոր բան մը չի-
կայ: Եթէ լրագրական անհատ-
նում յօդուածներն ու թղթակցու-
թիւններ, անվերջ թուոցիկներն ու
վիճարանական ժողովներ այդ հին
խնդիրները բաւական չլուսաւո-
րեցին, ասկէ ետքն ալ լուսաւո-
րելիք չունին, սա գերազանց
պատճառով որ, կը կրկնենք, ա-
տոնց մասին թեր ու դէմ ըսուե-
լիք նոր բան մը չի մնաց եւ ար-
դէն ըսուածներուն մեծագոյն մա-
սը տաղտկացուցիչ կրկնութիւն-
ներ եղան: Կարելի է գեռ նոր
փաստեր գտնել յեղափոխական
շարժումներուն կանխահասութիւ-
նը ապացուցանելու համար: Պէտք
մնացած է գեռ յեղափոխականնե-
րու մէկ մասին թեթեւատուութիւն-
ներն եւ զիջումները հաստատե-
լու: Կա՛յ տակաւին Դրան ցոյցին
եւ Օսմ. Պանքայի յարձակումին
թեր ու դէմ նոր ըսելիք մը: Այս
եւ ատոնց նման խնդիրներ արդէն
այնքան ծեծուեցան որ ամէն մարդ
անոնց մասին գալափար մը կաղ-
մեց. իսկ ա՛յն որ մինչեւ հիմայ
չի կրցաւ որոշ եղբակացութեան
մը գալ ու կը վարանի գեռ ինք.

նիրեն վճիռ մը տալու, բնաւ այդ
տարածում վիճակէն չի կրնար
զուրս ելնել, եթէ տակաւին հա-
զար անգամ լսէ, ինչ որ արդէն
հարիւրաւոր անգամներ լսեր ու
կարգացեր է:
Կուսակցութիւնները իրարու
ֆետիշներ, որքան կարելի էր:
Բացորոշ իրողութիւն մըն է որ
ամէնքն ալ այսօր տկարացած են,
մէկը շատ, միւսը քիչ: Իրենց
անդամներուն, գործակիցներուն,
նուիրատուներուն եւ համակրողնե-
րուն թիւը այժմ աւելի նուազ է
քան երբեք. եւ անոնք որ այնքան
պայքարներէ ու վիճարանութիւն-
էտքը իրենց կուսակցութիւննե-
րուն յարած կը մնան, ըլլա՛յ ի-
րենց ներքին համապոկներու հե-
տեւանքով, թէ՛ ուրիշ ու է
պատճառով, զո՛ւր ջանք է ասկէ
ետքը զիրենք տարհանողիւ ջա-
նալ, զի հաւանականաբար պի-
տի յամառին մնալ ուր որ են:
Այն զօրաւոր կապիւրը որոնցմով
կապուած են իրենց կուսակցու-
թեանց հետ եւ զորս հակառակորդ-
ներու յարձակումներն ու բնա-
զատութիւնները չի կրցին ցարդ-
բակել, անլոյժ պիտի մնան ասկէ
ետքն ալ: Գոնէ արտաքին երե-
ւոյթը այսպէս է: Կրնայ գուցէ
երկարատեւ պայքարներով իրենց
մէկ աննշան մասն եւս խուլիլ այս
կամայն կուսակցութիւնէ: Բայց
չարժիր, քանի որ ատով կուսակ-
ցութիւնները չպիտի դադրին գո-
յութիւն ունենալէ, մինչդեռ—
եւ այս է բուն, կենսական հարցը—
պայքարի շարունակութիւնը կը
սպառնայ անփոխարինելի ֆետի-
շներ եւ անդարմանելի կորուստներ
տալ, մէկ կողմէն ստիպելով մեզ
զրուկան, շինիչ գործունէութեան
մը յատկանալի մեր թանկագին
ժամանակը վատնել անօգուտ, կամ
շատ շատ՝ բացասական աննշան
օգուտներ խոստացող գործունէու-
թեան մը, եւ միւս կողմէն նպաս-
տելով մեծ փտանգի մը պատրաս-
տութեան, վճատութեան սեւ ոգի-
ին տարածումին ժողովուրդին մէջ,
որ, ինչպէս արդէն ըսած ենք, վըշ-
տաբեկ ու անձկալից՝ իր աչքերը
չորս կողմը կը պտտցնէ նոր յոյ-
սերու նշոյլ մը գտնելու համար ու

անոնց տեղ կը տեսնէ միայն կու-
սակցական հակառակութիւններ:
Ահա ինչո՛ւ համար, մեր հրա-
պարակագրի պարտականութեանց
սրբազնագոյնը կը նկատենք մեր
տկար ձայնը բարձրացնել աղե-
տալի պայքարներու շարունակու-
թեան դէմ եւ պահանջել ազգային
ամենանուիրական շահերուն անու-
նով՝ որ ընդունինք նոր ուղղու-
թիւն մը, որով ամէն անհատ որ
հայու անուն եւ հայու սիրտ կ'կրէ,
կուսակցական ըլլա՛յ թէ ոչ, կա-
րենայ գոնէ պտղունց հող մը նու-
իրի ազգային ազատութեան շէն-
քին ի նպաստ:

ԹԱՂՈՒՄ ՄԸՆ ԱԼ

Սահմանադրութիւնն ալ թա-
ղեցինք: Տարին մէկ անգամ, վեր-
ջապէս հոգիները հրահրող հան-
գէս մըն էր, ու իր գոյութիւնը
անհրաժեշտ կըլլայ, երբ նկատու-
թեան առնենք միջավայրը՝ խեղ-
զող ու մահացնող: Պատրիարք ու
վարչութիւն իրենց յաղթապանծ
գահը կուզեն տեսնել հայ ժողո-
վուրդի աննշանացած հոգեկան ըստ-
րուկ վիճակին վերեւ. ատոր հա-
մար է որ ամէն ջանք ի գործ պի-
տի դնել փեթուտելու ամէն ազա-
տասիրական ձգտում, մարելու ա-
մէն ձայն, որ ապագային զիրենք
կրնայ երել իրենց վեղարովը ու ի-
րենց ֆէսերովը մէկտեղ...
Ահաւասիկ իրենց օւկանը, Բիւ-
զանդիոն, պառաւ ուղղութեամբ,
ֆետիշար պառաւ ճիգուիտ կնկան
մը պէս: Մնաց որ պատրիարքը
յարմար ատեն ալ հասաւ, շրջան
մը, ուր կարելու ուժեր հեռացած
էին, եւ ուր բնականապէս քննա-
դատութիւնը գէթ անուղղակի
կերպով, չէր կրնար իր փրկարար
ազդեցութիւնը ունենալ: Ո՞վ գի-
տէ հիմա ի՞նչ գաւեր կը նիւթուին
նորածին Մասիսի դէմ, զի անոր
անկախ ու քննադատական ոգին,
ինչպէս կը կարծում՝ աղնուաշուր-
ներուն գործին դալու բան չէ:
Ամէնէն փափուկ շրջանի մը մէջ
հասած ըլլալուն, ամէնէն մեծ դե-
րը ունի հիմա Մասիս Պօլսոյ մէջ.

կռիւր աւելի քան երբեք պէտք է
դժուար ըլլա՛յ Հայրենիք կռուեցաւ
արմատացած նախապաշարունե-
րու դէմ, եւ եթէ անուղղապէս
կրցաւ իր գործը առաջ տանիլ Ա-
շըգեանին օրով, պէտք է նկատու-
թեան առնենք որ բազմազան
հանգամանքները շատ աւելի տար-
բեր էին այսօրուանէն: Յետոյ իզ-
միրեանը պիտի գար ու անոր պատ-
րիարքութիւնը միջոց մը եղաւ
Հայրենիքի ձգտումներուն մասամբ
հեշտօրէն իրականացումին Մա-
սիս բողոքովին մինակ է հիմա ու
իր գործունէութեան ճամբան ա-
մէն ատենուրէն աւելի փշոտ ու
անկ... Մէկ կողմէն պատրի-
արքը պիտի ջանայ թուլցնել բո-
լոր այն միջոցները, որոնք ազգա-
յին ինքնաճանաչութիւն կուտան ու
է հայ անհատի, այսինքն հոգ
պիտի չը տանի դպրոցներուն, ի
հարկին ազդեցութիւն ալ պիտի
բանեցնէ Ուսումնական խորհուր-
դին վրայ, միւս կողմէն՝ Մասիս
պիտի յարձակի անխնայ խեղճ Ու-
սումնական խորհուրդին վրայ, ազ-
գային վարժարաններուն բարե-
բումը պիտի ուզէ, կեդրոնակա-
նին վերաբացուելուն պիտի փա-
փաքի, երբ անոնք, վարժապե-
տանոց հաստատելու գաղափարին
ներքեւ, ուրիշ թաքուն ձգտում-
ներ ու նպատակներ կրնան ունե-
նալ:

Օր մըն ալ, եթէ նեղը մնան,
կրնան պատճառ ըլլալ, որպէս զի
Մասիսն ալ խափանուի ու անա-
տեն իմացական կեանքին մահա-
ցումը: Ահաւասիկ ազգետները, զօր
պիտի կրնայ արտագրել Հայոց
Պատրիարքի գործունէութիւնը:
Թերեւս հիմա առարկուի թէ՛ Ս. Օր-
մանեան ի՞նչ ազդեցութիւն կրնայ
ունենալ երբ թուրք կառավարու-
թեան ձգտումն է արդէն հայու-
թիւնը թմրեցնել տգիտութեան
մորֆինով: Բայց երբ պատրիար-
քը կառավարութեան գործիքը
կըլլա՛յ...

Ա՛ն օրէն, ուր սղգային երգե-
րը ա՛լ դադրեցան մեր ազգային
վարժարաններուն մէջ գոյութիւն
ունենալէ, մեծ թաղումն էր մեր
զգացումները կրակի մէջ պահող
մէկ հրատարրին... ան օրը, ուր

